

այս թշուառութեննէս: Ինձ պատասխան տվեց, թէ ընդ վայր տվիր այն շորս քէսան վասն ազատութեան քափուչինին, դուն ի՞նչ բան ունէջիր, թող կախէչին մեր մարդն, անխելք հայ: Այն շորս քէսէն պահած լինէչիր, այժմ քեզ պէտ գուգար:

– Արդ տես դուն եւ դատ արայ եւ տես, թէ գո՞յ ի ձեզ քրիստոնէյութիւնն, տես մեր ազգին արածն եւ ձերոցն:

– Դարձեալ պատմեց ինձ տիկին այն, թէ մինչի Մաուչիլիու գայճաք աստ, ի կրպակի միոջ կերաք ճաշ եւ հատուցաք զգինն կերակրին: Մինչ նստաք ի կառս, սիրտս ջուր յուզեց ըմպել: Խնդրեցի եւ ըմպեցի, գաւաթ մալ իմ դուատրն յուզեց, կրկին ես ըմպեցի: Յետ այնորիկ յելաք ի գնալ, իբրեւ հեռացաք փոքր ինչ, տեսի, որ աղախինն գկնի մեր ձայնէր կայ առնու: Մինչ ժամանեաց առ մեզ, սկսեց այպա/262b/նել մեզ, թէ ընդէ՞ր ոչ հատուցաք զվարձն: Պատասխանեցի, թէ հատուցի զգինն կերակրին ամենայն անթերի կրպակապետին: Ասաց աղախինն ոչ խնդրեմ ի ձէնջ զգինս կերակրոց, այլ այն երեք գաւաթ ջրի վարձն, որ ետու ձեզ ի ըմպել: Իբրեւ լայ գայս, հիացեալ ապուշ մնացի: Ապայ թէ տվի երեք ըստակ, որ թոյլ եզ զմեզ ի գնալ: Տեսիր գայս եւ լսեցիր: Միթէ այսպիսի իրս գործողացն զլնի ասել, թէ գոյ ի նոսա ի քրիստոնէյութին:

– Դուն մեր յերկիրն շատ ես կացել: Երբեք տեսի՞ր ի մէջ հայոց զայսպիսի գործ: Մեր մին կինն շորս քիսալ] գրամ տվեց ձեր մին քափուչինն ազատելոյ, ձեր մին կինն երեք գաւաթ ջուր տվեց, առաւ երեք ըստակ:

– Մեր տիկինն շորս քէսալ] վասն ձեր մին մարդու: Եթէ մեր բովանդակ հայոց ազգն տանէչին ի սպանճումն, ասայ ինձ ճշմարիտն, թէ վասն ազատութեան համօրէն ազգին մերոյ դուք՝ ոչ: Բայց փափն ձեր կուտա՞ր շորս քէսայ: Ոչ: Կարե՞ս ասել, թէ այոյ եւ ամաշե՞ս ասելն, թէ ոչ: Վասն որո՞յն դարձար ի լուութեան:

– Դարձեալ պատմեց ինձ հայ մի, թէ յատուրս ձմեռան եղանակին գնայի այլ իմն քաղաք: Տեսի այր երեք, որ ի վերայ ճանապարհ

հին խարոյկ արկեալ ջեռնին: Ողջունեալ նստայ ընդ նոսա առ ի ջեռնու: Զկնի ջեռանելոյս յելի, որ գնամ, կալան գիս, թէ տուր մեզ զվարձս հրոյն որով ջեռար, /263a/ քանզի մեք այս փալ]տս դրամօք ստացաք: Հատուցի նոցա, գոր ինչ որ խնդրեցին եւ ապայ, թէ թոյլ ետուն: Տես, մի՞թէ այս գործ է քրիստոնէյութեան: Մի՞ ամաշել, ուրեմն, լռէ յաւել հարցանելոյ. որքան որ շատ հարցանես, այնքան առաւել զարմանք լսես:

– Քանզի զամենայն ինչ, որ արարին ընդ իս որպէս որ վերոյ] ճառեցաւ, այն ամենայն գործ է անօրէնի եւ ոչ քրիստոնէչի: Այնու ոչ բաւականայր, սկսեցիր դարձեալ հարցանել:

– Այր ոմն իստանպոլցի գայ ի Փարիզ քաղաքն առեւտուր առնել: Զամենայն ինչ գործ, որ կամի առնել, ոչ թողուն քաղաքացիքն: Սկսէ նստիլ ի պողոտայս եւ յանձս ճանապարհաց եւ ի վերայ կարմնճոց վաճառել զջերմակեղէնս: Այն եւս ոչ թողուն: Սկսէ սեղան տախտակեայ շինել եւ սփռել ի վերայ նորա յիւր ջերմակեղէնն եւ կախել զնայ ի պարանոցէն եւ սկսէ այնպէս շրջիլ առ քաղաքան եւ վաճառել: Այն եւս արգելուն: Անճարակ մնայ հայս այս: Գնայ յարի առ դուկ ՏՕւլէանն՝ ազգականն ֆռանցիզ թագաւորին<sup>78</sup>, մատուցանէ նմայ զեկարան, որով յայտնէ զորպիսութիւն իւր: Իշխանն այն այնքան կարաց շնորհաբաշխութիւն առնել առնն այնորիկ, որ ասաց նմայ, թէ գնայ իմ այնիշ դարպասի սրահն նիստ եւ վաճառք արայ: Այն նշանակած դարպասն ունէր երկու դուռն. միօվն մտանէչին եւ զմիւսօվն յելանէչին: Մինչեւ ցե՛րբ նայէր /263b/ այրն այն, թէ այն սակաւ անցորդացն վաճառել իր ինչ: Տեսի եւ այն դարպասն եւ այրն այն, որգան կատարեցաւ:

– Ասացիր ինձ, թէ դուն շարագործ էչիր, վասն այն շարչարեցին զքեզ: Արդ այս վերոյ] արքն շարագործ չէչին, քէմ ընդէ՞ր այնպէս արարին: Այսպիսի գործ գործողացն զլնի՞ ասել, թէ են քրիստոնէայ, կամայես ասել՝ ո՛չ:

78 Խօսքը, հաւանաբար, Օղլեանի դուքս Ֆիլիպի (1674-1723) մասին է, որը Ֆրանսիայի ռեզիտանտ էր մինչեւ 1723 թ.: